Mer siro ashun
de l'Arménien Rouben Hakhverdian

Մեր Սիրո Աշունը

Դու կարծում ես այդ անձրևն է արտասվում պատուհանիդ,
Այդ ափսոսանքի խոսքերն են գլորվում հատիկ-—հատիկ:
Գլորվում են ու հոսում են, ապակուց թափվում են ցած,
Այս խոսքերը, որ լսվում են իմ երգի մեջ ուշացած:

Ու՞մ է պետք խոստովանանքդ, ափսոսանքդ ուշացած,
Սերը քո մի հանելուկ էր ու գաղտնիք էր չբացված:
Դա գուցե աշնան կատակն էր, տերևներն էին դեղնած,
Ծառուղում լուռ արտասվում էր մի աղջիկ՝ մենակ կանգնած:

Կրկներգ]
Մեր սիրո աշունը էլ երբեք չի կրկնվի,
Եվ անցյալն ամեն անգամ աշնան հետ կայցելի,
Ու պատուհանիդ լուռ կարտասվի...
Ու պատուհանիդ լուռ կարտասվի:

Ես հիմա նոր հասկանում եմ՝ անցյալը ետ չես բերի,
Այս ամենը հատուցումն է իմ գործած հին մեղքերի:
Այն աղջիկը և աշունը բախտն էր իմ, որ կորցրի,
Դա ջահել իմ խենթությունն էր, որ երբեք ինձ չեմ ների:

Ես գիտեմ՝ երջանկությունը մի անգամ է այցելում,
Իսկ հետո, երբ հեռանում է, այցետոմսն է իր թողնում:
Ու հետո, ամբողջ կյանքում մեր մենք նրան ենք որոնում,
Այն հասցեն, որ նա թողնում է, երբեք ոչ ոք չի գտնում:

Կրկներգ]
Մեր սիրո աշունը էլ երբեք չի կրկնվի,
Եվ անցյալն ամեն անգամ աշնան հետ կայցելի
Ու պատուհանիդ լուռ կարտասվի...
Ու պատուհանիդ լուռ կարտասվի:

L'automne de notre amour

Crois-tu que c’est la pluie qui coule (pleure) à ta fenêtre ?
Ce sont les mots des regrets (les mots qui ont été absents) roulant (coulant) goutte à goutte.
Ils roulent, coulent et tombent de la vitre, bas,
Ces mots que l'on entend trop tard dans ma chanson.

Qui a besoin de la confession tardive de tes regrets ?
Ton amour était un mystère, secret et inavoué (non-ouvert).
Ce n’était qu'une farce d'automne ; les feuilles avaient jauni,
Dans l'allée, une fille solitaire pleurait en silence.

<u>Refrain</u>
L’automne de notre amour ne se répétera jamais.
Et le passé nous rendra visite à chaque automne.
Ruisselant à ta fenêtre en silence.
Ruisselant à ta fenêtre en silence.

Je comprends à l’instant : on ne fait pas revenir le passé.
Tout ça n’est que l’expiation de mes anciens péchés.
Cette fille et l’automne étaient mon destin (ma chance / ma fortune) perdu,
La folie de ma jeunesse, que je ne me pardonnerai jamais.

Moi je sais que le bonheur ne vient qu’une seule fois
Et lorsqu’il s’éloigne, il laisse sa carte de visite.
Et nous cherchons tout au long de notre vie,
Cette adresse que personne ne retrouve jamais.

<u>Refrain</u>
L’automne de notre amour ne se répétera jamais.
Et le passé nous rendra visite à chaque automne.
Ruisselant à ta fenêtre en silence.
Ruisselant à ta fenêtre en silence.